ՀՏԴ 342.4
DOI: 10.56246/18294480-2023.15-45

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ԵՀՀ միջազգային հարաբերությունների և
իրավագիտության ինստիտուտի դասախոս,
ՀՀ ՊՆ № զորամասի օպերատիվ
բաժանմունքի ավագ սպա, կապիտան
էլփոստ՝ norik.shaxnazaryan@yandex.ru*

Հոդվածում ներկայացվում է Սահմանադրության և սահմանադրականության հասկացությունն ու էությունը: Հոդվածի նպատակն է իրավահամեմատական վերլուծության մեթոդով ցույց տալ Սահմանադրության և սահմանադրականության պատմական ծագումնաբանությունն ու զարգացումը, դերն ու նշանակությունը պետության և հասարակության կյանքում: Նպատակը կանխորոշել է հետևյալ խնդիրների առաջադրումը.

1) բացահայտել Սահմանադրության և սահմանադրականության հասկացությունը, էությունը և բովանդակային առանձնահատկությունները,

2) կատարել սահմանադրականության բաղադրիչների համառոտ վերլուծությունը,

3) սահմանել փաստական և իրավաբանական սահմանադրությունների հասկացությունները,

4) ներկայացնել Հիմնական օրենքի մշակման, ընդունման և փոփոխության ընթացակարգի և կարգավորման առարկայի առանձնահատկությունները:

Հեղինակը համակարգված մեթոդաբանությամբ քննական վերլուծության է ենթարկել երկու միմյանց հետ սերտ փոխկապակցված եզրույթների պատմական և իրավական հասկացություններն ու նշանակությունները:

Հանգել ենք այն եզրակացության, որ Սահմանադրությունը ոչ միայն պետության հիմնական օրենքն է, այլև յուրահատուկ դաշնագիր է կառավարողների և կառավարվողների միջև միմյանց իրավունքներն ու պարտականությունները ճանաչելու մասին, ինչպես նաև ամրագրում է հասարակության և պետության սահմանադրական կարգի հիմունքները, քաղաքացիների իրավական դրությունը, այսինքն՝ հասարակության հիմքը, որի վրա հիմնադրվում է մնացած ամեն ինչ: Սահմանադրությամբ են ամրագրվում պետության կառուցվածքը, կառավարման ձևը, քաղաքական ռեժիմը, անձի իրավական կարգավիճակի, արտաքին և ներքին քաղաքականության հիմունքները: Իսկ սահմանադրականությունը

գվյալ պետության Սահմանադրությամբ ամրագրված նորմերի ու արժեքների ընկալումն է հասարակության կողմից, այդ արժեքների կիրառությունը կյանքում, պետական իշխանության մարմինների համապատասխան կամքի դրսևորումը ամրագրված նորմ-արժեքների կիրառման և ապահովման գործում:

Բանալի բառեր՝ *Սահմանադրություն, սահմանադրականություն, սահմանադրական արժեք, իրավակարգավորում, իրավական ակտ, իրավաբանական ուժ, փաստական և իրավաբանական սահմանադրություններ, սահմանադրականության բաղադրիչներ, սահմանադրական գաղափարներ, սահմանադրական կարգավորումներ:*

Սահմանադրությունը նոր ժամանակների ծնունդ է, թեև եզրույթի արմատները խորանում են հնագույն ժամանակներ:

Սահմանադրությունը պատմաիրավական և իրավաքաղաքական կատեգորիա է: Հին Հռոմում ծնունդ առած «Սահմանադրություն» եզրույթը դարերի խորքերից հասել է մեզ և հաստատուն տեղ գրավել աշխարհի շատ ժողովուրդների իրավական համակարգերում: Այն լատիներեն «Constitutio» բառի թարգմանությունն է, որը նշանակում է «սահմանել» կամ «կառուցվածք»: Պատմական իրավական հուշարձանները վկայում են, որ այս եզրույթը իրավաբանական իմաստով օգտագործվել է դեռևս հունական և հռոմեական փիլիսոփաների ու իրավագետների աշխատություններում, հռոմեական կայսրերի և եվրոպական պետությունների օրենսդրության մեջ: Օրինակ՝ Հին Հռոմում սահմանադրություններ էին կոչվում կայսրերի արձակած որոշ իրավական ակտերը՝ ի տարբերություն ազատ քաղաքացիների ժողովրդական ժողովների ընդունած օրենքների: Սակայն ո՛չ ստրկատիրական և ո՛չ էլ ֆեոդալական պետություններին Սահմանադրությունը՝ իբրև գրված հիմնական օրենք, վերջինիս այժմեական իմաստով հայտնի չի եղել: Այս իմաստով սահմանադրությունները առաջացան բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում և արդյունք են բացարձակ միապետությունների դեմ տարած հաղթանակի և ազգային-ազատագրական պայքարի[1]:

Սահմանադրությունը՝ որպես պատմաիրավական և իրավաքաղաքական ինստիտուտ, ուղղած էր ավատատիրական միահեծան պետական կարգերի և աստիճանավորված հասարակական կառուցվածքի դեմ: Սահմանադրությունը եկավ հաստատելու և իրավաբանորեն ամրագրելու մարդու

[1] Хабриева Т. Я., Чиркин В. Е., Теория современной конституции, М„ 2005, с. 12-13; Авакян С.А., Конституционное право России, Том 1, 2005, с. 136; Арутюнян Г. Г., Баглай М. В., Конституционное право. Энциклопедический словарь, М., 2005, с. 228.

բնական ու անբաժան իրավունքները և ազատությունները՝ սահմանելով այնպիսի պետաիրավական կառուցակարգ, որն ապահովելու էր մարդու արժանապատիվ, բարեկեցիկ և անվտանգ կյանքը:

Սահմանադրությունները իրավաբանորեն ամրագրեցին և կարգավորեցին առաջին հերթին պետական իշխանության կազմակերպման ու իրականացման ձևերը, մեթոդները և եղանակները[2]: Սակայն եթե հիմնահարցը դիտարկելու լինենք այն սոցիալական արժեքների տեսանկյունից, որոնք հաստատվեցին այն ժամանակ և այժմ հաստատվում են աշխարհում, պարզ է դառնում, որ Սահմանադրություն կոչված երևույթն առաջին հերթին կյանքի է կոչվել մարդու իրավունքներն արտահայտելու և ամրապնդելու համար, ուստի այդ առնչությամբ միայն պետք է կանոնավորի ու սահմանափակի պետական իշխանությունը:

Սահմանադրությունը ոչ միայն երկրի հիմնական օրենքն է, այլ հենց այն իրավաբանական փաստաթուղթը, որն ունակ է մարդու իրավունքները դարձնել իրական ու անսասան: Այսպես ընկալեցին հիմնահարցը պետության առանցքային նշանակության օրենքներ ստեղծելու ուղղությամբ առաջին քայլեր կատարող իրավագետները, ովքեր այդ իրավական ակտերի օգնությամբ փորձեցին սաստել պետական իշխանության կամայականությունները:

Սահմանադրական իրավունքի տեսաբանները դիտարկում են, որ հասարակության մեջ առկա են փաստական և իրավաբանական սահմանադրություններ[3]: Փաստական Սահմանադրությունը իրավաբանորեն ամրագրում է իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունները և սահմանում է դրանց իրականացման կառուցակարգերը: Դրանք գոյություն ունեն փաստացի, օբյեկտիվ կերպով:

Սահմանադրությունն իրավաբանական տեսակետից հանդիսանում է պետության հիմնական օրենքը, որն ամրագրում է հասարակական և պե-

---

[2] Սահմանադրական իրավունքի բնագավառում նշանավոր անգլիացի իրավագետ Լ. Ջրիվիգը «Բրիտանական սահմանադրությունը» աշխատանքում պնդում է, որ Անգլիայի Սահմանադրությունը հանդիսանում է միայն «Օրենքներում և սահմանադրական համաձայնագրերում շարադրված սկզբունքներին համապատասխան, գործող ինստիտուտների ամբողջություն: Սահմանադրությունը հասարակությունն է քաղաքական տեսանկյունից»: /Greavaz H., The British constitution, London, 1995, P. 11/; Guissani E. Constitutional abd Administrative Law. L., 2008. P. 4-5.; Homon P., Troper M. Drot Constitutionnel. 30-e ed. P., 2007. P. 24.; Alder J. Constitutional abd Administrative Law. 6 th ed. N.Y., 2007. P. 7.

[3] Хабриева Т. Я., Чиркин В. Е., Теория современной конституции., М., 2005, с. 48-54.

տական կարգի կարևորագույն սկզբունքները, իշխանության աղբյուրը, պետության կառուցվածքն ու կառավարման ձևը, քաղաքացիների իրավական դրության հիմունքները[4]:

Ինչպես նշել է հայտնի սահմանադրագետ Վ. Նազարյանը. «Սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժով օժտված մեկ միասնական, ամբողջական նորմատիվ իրավական ակտ է, որը ժողովրդի կամքին համապատասխան կարգավորում է կյանքի բոլոր ոլորտներում ծավալվող ամենից էական, արմատական, վճռորոշ հարաբերությունները, այն պաշտոնապես հռչակում և իրավաբանորեն ամրագրում է ի ծնե մարդուն և ժողովրդին (ազգին) պատկանող բնական և անօտարելի իրավունքներն ու ազատությունները և հիմնադրում է դրանց իրականացման (կենսագործման) պետական եղանակը»[5]: Պրոֆեսոր Ն. Այվազյանի կարծիքով՝ «Սահմանադրությունը նորմատիվ ակտ է, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ պետության իրավական ողջ համակարգի նորմերի նկատմամբ և կոչված է կարգավորելու՝ մի կողմից մարդու և հասարակության, մյուս կողմից մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև հենց իր պետության կազմակերպման հիմունքները»[6]:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ հեղինակները ընդգծում են Սահմանադրության միայն իրավական հատկանիշը (բարձրագույն իրավաբանական ուժը)՝ չանդրադառնալով նրա սոցիալական (հասարակական) և քաղաքական կողմերին: Վերջիններս Սահմանադրության էական, ելակետային հատկանիշներ են, քանզի Սահմանադրությունն առաջացավ քաղաքական խոշոր իրադարձությունների (հեղափոխությունների, ազատագրական պայքարի) արդյունքում: Կարծում ենք՝ Սահմանադրությունը իրավաքաղաքական որոշիչ ակտ է, յուրահատուկ հասարակական պայմանագիր՝ պետության կառուցվածքի, կառավարման ձևի, քաղաքական ռեժիմի և անձի սոցիալ-իրավական կարգավիճակի մասին: Եվ հենց այս գործոններից է բխում նրա՝ «բարձրագույն իրավաբանական ուժի» հատկանիշը և նորմատիվ իրավական ակտերի համադրելիության հատկանիշը: Սա նշանակում է, որ բոլոր

---

[4] Авакян С.А., Конституционное право России., М., 2003; Энтин Л.М., Разделение властей: опыт современных государств, М., Юрид. лит., 1995, 174с.

[5] Նազարյան Վ., Հայաստանի Հանրապետության սահմանադրական կոնցեպցիան, Երևան, 1992, էջ 7:

[6] Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. դասագիրք բուհերի համար (պատ. խմբ. պրոֆեսոր Ն. Մ. Այվազյան), Երևան, 2003, էջ 48:

օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին[7]:

Հիմնական օրենքի և այս կամ այն նորմատիվ ակտի միջև հակասության դեպքում, վերջինս, սահմանադրական պահանջներին համապատասխան, անհապաղ պետք է վերացվի կամ ենթարկվի փոփոխության: Այստեղից հետևում է ևս մեկ կարևոր հանգամանք. Սահմանադրության մշակումն ու ընդունումը ենթադրում է ընթացիկ օրենսդրության թարմացում և նորացում[8]:

Սահմանադրությունն ընդունվում և փոփոխվում է հատուկ կարգով: Այդ կարգը ամրագրվում է սահմանադրություններում առանձին բաժնի կամ հոդվածի տեսքով և էականորեն տարբերվում է մյուս օրենքների ընդունման կամ փոփոխության ընթացակարգից:

Սահմանադրաթյունը ժամանակակից իմաստով, ի տարբերություն մյուս իրավական ակտերի, ընդունվում է ժողովրդի կողմից կամ նրա անունից: Այդ սկզբունքի գործողությունը սկսվել է այն ժամանակներից, երբ ծագել է Սահմանադրության ստեղծման գաղափարը (XVIII դար):

Սահմանադրություններն ընդունվում են ոչ միայն ժողովրդի կողմից անմիջականորեն (հանրաքվեի կամ ընտրված մարմինների, սահմանադիր ժողովի կամ խորհրդարանի միջոցով), այլ նաև հենց ժողովրդի անունից: Այսպես, Իտալիայի Հանրապետության Սահմանադրության նախաբանում նշվում է, որ այն հավանության է արժանացել և ստորագրվել Սահմանադիր ժողովի կողմից՝ 1974 թվականի դեկտեմբերի 22-ին:

Ժողովրդավարական պետություններում ժողովուրդը հանդիսանում է ինքնիշխանության կրողը և իշխանության միակ աղբյուրը: Եթե պետական իշխանությունը համարվում է ժողովրդի կամքի արտահայտման, դրսևորման բարձրագույն ձև, ապա միայն այդ իշխանությունն է, որ կարող է ունենալ հիմնարար բնույթ:

Հիմնական օրենքների մշակման և ընդունման հատուկ ընթացակարգի իմաստն այն է, որ որևէ պետական մարմին իր հայեցողությամբ չվարվի սահմանադրական նորմերի հետ: Ժողովրդի բարձրագույն կամքն իրավա-

---

[7] << Սահմանադրություն, հոդվ. 5, 2-րդ մաս, https: //www.arlis.am/ documentview.aspx? docID=102510

[8] Мазуров А. В., Конституция и общественная практика, М., 2004, ст. 22-23; Степанков И. М., Конституция и политика, М., Наука, 1984.

բանորեն արտացոլվում է հիմնական օրենքի մեջ, որն իր իրավաբանական ուժով վեր է ցանկացած նորմատիվ իրավական ակտից:

Հարկ է ընդգծել, որ Սահմանադրությունն առավել կայուն և հիմնարար բնույթի իրավաքաղաքական փաստաթուղթ է, որում կարող են ամրագրվել և ամրագրվում են սոցիալական քաղաքականության կամ ծրագրային բնույթի դրույթներ:

«Սահմանադրություն» եզրույթի հետ մեկտեղ կիրառվում են նաև այլ հասկացություններ: Լատինական Ամերիկայի որոշ երկրներում (օրինակ՝ Կոլումբիայում, Վենեսուելայում) օգտագործվող «քաղաքական սահմանադրություն» հասկացությունը կոչված է տարբերակել սահմանադրությունը որպես հատուկ տեսակի ակտ կանոնադրությունից, որը մի շարք լեզուներում նույնպես հնչում է որպես Սահմանադրություն (constitution): «Քաղաքական» բառն առանձնացնում է հիմնական օրենքը, օրինակ, արիմիության կանոնադրությունից: Որոշ երկրներում Սահմանադրություն է կոչվում միայն այն կազմող ակտերից մեկը (օրինակ՝ Կանադայի 1982թ. Սահմանադրությունը, թեև նրա կազմի մեջ են մտնում ևս երկու տասնյակ հիմնական օրենքներ): Ավստրիայում հիմնական ակտը կոչվում է «Սահմանադրական օրենք» («Դաշնային սահմանադրական օրենք»)[9]:

Գերմանիայում 1949թ. Սահմանադրությունը պաշտոնապես անվանվում է հիմնական օրենք, ըստ այդմ այդ օրենքի ընդունման ժամանակ այս երկու հասկացությունների միջև արվել է հստակ տարբերակում: Հիտլերյան Գերմանիայի վերացումից հետո, մշակելով 1949թ. ակտը Գերմանիայի մի մասի համար (պատերազմից հետո Գերմանիայի մեծ մասի վրա ստեղծվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը դաշնակիցների օկուպացման գոտում և Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը՝ ԽՍՀՄ-ի օկուպացման ավելի փոքր գոտում), Խորհրդարանական խորհուրդը (լանդթագների գերմանական պատմական հողերի ներկայացուցիչների մարմինը) ենթադրում էր, որ Սահմանադրություն կընդունվի նրա երկու մասերի վերամիավորումից հետո: 1990թ. Գերմանիան միավորվեց: Ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Սահմանադրության նախագիծը մշակելու նպատակով, սակայն եկան այն եզրակացության, որ 1949թ. ակտը միանգամայն համապատասխանում է ժամանակակից պայմաններին, և կարիք չկա այն փոխարի-

[9] Хабриева Т. Я., Чиркин В. С., Теория современной конституции, М., 2005, С.34.; Конституционное (государственное) право зарубежных стран: актуальные проблемы, М., 1990.

նելու (Հիմնական օրենքի մեջ մինչ այդ արվել էին մի քանի տասնյակ լրացումներ և փոփոխություններ): Այսպիսով, թերևս, վերացվեց գերմանական իրավաքաղաքական մտքի (և գիտության) կողմից «Սահմանադրություն» և «Հիմնական օրենք» հասկացությունների միջև արվող տարբերությունը:

Եվ վերջապես, նշենք, որ Սահմանադրության կարևոր առանձնահատկություններից է նրա յուրահատուկ կարգավորման առարկան, այսինքն՝ հասարակական հարաբերությունների այն հատուկ բնագավառները, որոնք պահանջում են սահմանադրական կարգավորում: Ի տարբերություն մյուս իրավական ակտերի, որոնք կյանքի են կոչվում կարգավորելու որևէ հստակ բնագավառ կամ հասարակական հարաբերությունների որոշակի խումբ, Սահմանադրությունն ունի կարգավորման համապարփակ բնույթ, և այն ընդգրկում է հասարակության կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլն՝ ընդ որում կարգավորելով այդ ոլորտների առավել կարևոր, հիմնային, առանցքային նշանակության հասարակական հարաբերությունները: Այդպիսիք են սեփականության ձևերն ու բովանդակությունը, անհատի և պետության փոխհարաբերությունների բնույթը, պետական իշխանության պատկանելությունը և իրացման ձևերն ու մեխանիզմները, պետության և քաղաքական կուսակցությունների տեղն ու հարաբերակցությունը քաղաքական համակարգում և այլն:

«Սահմանադրություն» հասկացության հետ անխզելիորեն կապված է սահմանադրականություն հասկացությունը, որը բարդ հասարակական-քաղաքական և պետահիրավական հասկացություն է, և որի հիմքը կազմում են սահմանադրական ժողովրդավարության, այսինքն՝ Սահմանադրության՝ որպես պետության և հասարակության հատուկ փաստաթղթի վրա հիմնված ժողովրդավարության սկզբունքների, իշխանության որոշակի ինստիտուտների առկայությունը, Սահմանադրությանը համապատասխան քաղաքական ռեժիմի և ժողովրդավարության արժեքների պաշտպանության համակարգը, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, սահմանադրական կարգն ամբողջությամբ:

Սահմանադրականության հիմնախնդրին անդրադարձել են ինչպես արևմտյան մասնագետներ Գ. Ռասսելը, Ա. Շայոն, ռուս իրավագետներ Վ. Կաբիշևը, Ի. Կրավեցը, Վ. Կրուսսը, Օ. Կուտաֆինը, Տ. Պրյախինան, Ի. Ստեպանովը և ուրիշներ, այնպես էլ հայ սահմանադրագետներ Գ. Հարությունյանը, Ա. Հարությունյանը, տնտեսագետներ Հ. Սարգսյանը, Ռ. Գևորգյանը և այլք: Համամիտ ենք պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի ա-

ռաջարկած այն բնորոշմանը, որ «սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունն է, դրանց՝ որպես ապրող իրողության գոյությունը հանրային կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում: Ընդ որում, ըստ հեղինակի, խնդիրը ոչ թե Սահմանադրությունը պարզապես կիրառելն է, այլ այն որպես սոցիալական համակարգ ձևավորելը, որում Սահմանադրությունն իրացնում է այդ համակարգի յուրաքանչյուր բջիջ՝ որպես դրա գոյության կենսակերպ[10]:

Սահմանադրականությունը գաղափարական հայեցակարգ է, որին պետք է ձգտի հասարակությունը, որը շարժվում է սոցիալական առաջադիմության ուղիով: Սահմանադրականության հիմնական բաղադրիչներն են.

✓ Սահմանադրական գաղափարները, մասնավորապես պետության ու հասարակության կապվածությունը իրավունքի և օրենքի հետ, մարդկային արժեքների առաջնայնությունը և որպես հասարակության բարձրագույն արժեքի իմաստավորումն ու գիտակցումը, ժողովրդի անմիջական մասնակցությունը պետական իշխանության մարմինների ձևավորմանը, և այդ մարմինների գործունեությունը ժողովրդի շահերին ծառայեցնելը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների ու երաշխիքների առկայությունը, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ նյութաֆինանսական բազայի և իրավական հիմքերի առկայությունը, հասարակական և քաղաքական կազմակերպությունների գործունեության երաշխիքների ապահովումը:

✓ Հասարակության նորմատիվ իրավական հիմքերի առկայությունը, որն արտահայտվում է ամենից առաջ Սահմանադրության պաշտոնական ընդունմամբ՝ ներառելով սահմանադրական իրավական ինստիտուտների հանրագումարը: Սահմանադրական իրավական ինստիտուտները կարող են ստեղծել ժողովրդավարական պետություն, եթե արտահայտեն մարդու բնական իրավունքներն ու ազատությունները և դրանց իրականացման իրական երաշխիքները, ամրագրեն հանրային իշխանության կազմակերպման իրավական սկզբունքները (իրավունքի գերակայությունը, իշխանությունների

---

[10] Հարությունյան Գ., Հայ սահմանադրականության զարգացման հիմնախնդիրները, Զեկուցում Ստեփանակերտում հրավիրված միջազգային խորհրդաժողովում, 17.04.2010թ.: /URL:http://concourt.am/armenian/structure/president/articles/karabakh_april_2010.pdf/, Դիմելու ամսաթիվը՝ 29.11.2018 թ.:

տարանջատումը, տեղական ինքնակառավարման հիմունքները և այլն), քաղաքական բազմակարծությունը, բազմակուսակցության սկզբունքը և այլն:

✓ Ժողովրդավարական Սահմանադրությանը համարժեք փաստացի քաղաքական ռեժիմի առկայությունը: Սահմանադրականության մասին խոսք չի կարող լինել, եթե Սահմանադրությունը չի համապատասխանում փաստացի ձևավորված ազգային սկզբունքներին և պետաիրավական ռեժիմին (օրինակ՝ սոցիալիստական երկրների սահմանադրությունները): Տվյալ պարագայում գործ ունենք պաշտոնական հայտարարություն հանդիսացող, թղթային, իրականությանը չհամապատասխանող Հիմնական օրենքի հետ:

✓ Սահմանադրության և սահմանադրական կարգի պաշտպանության համակարգի առկայությունը: Սահմանադրականությունը ենթադրում է ազգային իրավական համակարգում Սահմանադրության գերակայություն: Սահմանադրության գերակայությունը կապված է ոչ միայն նորմատիվ իրավական աստիճանակարգության (սուբորդինացիայի) խնդրի, այլ նաև հասարակական գիտակցությունում դրա իմաստավորման ու արժևորման հետ:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ

➢ Սահմանադրությունը և սահմանադրականությունը փոխլրացնող և հարակից կատեգորիաներ են, որոնց հարադրության մեջ սահմանադրական նորմերը իրացվում են սահմանադրաիրավական հարաբերություններում:

➢ Սահմանադրությունը ստեղծվում է երկարատև ժամանակաշրջանի համար, հետևաբար Սահմանադրության դրույթների հաճախակի փոփոխությունները ծայրահեղ անցանկալի են: Այն պետք է կառուցված լինի հասարակության, պետության և քաղաքացու փոխհարաբերությունների հիմքերը կազմող հիմնարար նշանակության արժեքների համադրմամբ:

➢ Սահմանադրականությունը Սահմանադրության գործողության հետ կապված համակարգ է, որը կրում է էվոլյուցիոն բնույթ, բովանդակում է տարրեր, որոնք վերաբերում են քաղաքացիական հասարակության զարգացմանը:

➢ Սահմանադրականություն նշանակում է Սահմանադրությամբ ամրագրված արժեքներով փաստացի ապրելու, դրանք կիրառելու ապրելակերպ, կենսաձև, որն արտահայտվում է վերջինիս նորմերի կիրառմամբ: Սահմանադրականությունն ուսմունք է, որի ձևավորման, զարգացման և կատարելագործման հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը միշտ արդիական է, հատկապես մեզանում ընթացող սահմանադրական

բարեփոխումների համատեքստում:

➢ Սահմանադրականության հաստատման գրավականն են իրացված սահմանադրական այն արժեքները, որոնց մեջ առաջին տեղում մարդն է՝ որպես բարձրագույն արժեք, և նրա արժանապատվությունը: Մարդն ինքը պետք է արժևորի իրեն, գիտակցի իր բարձրագույն արժեք լինելն ու սեփական իրավաչափ վարքագծով պետությանը և մյուս քաղաքացիներին ստիպի հարգել իր արժեքը:

➢ Կարծում ենք, որ հասարակության կողմից Սահմանադրության ընկալումը որպես արժեհամակարգ, առանց որի կենսագործման հնարավոր չէ ապահովել երկրի կայուն զարգացումը, քաղաքացիների բարեկեցիկ և երջանիկ կյանքը, կնպաստի երկրում սահմանադրականության հաստատմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (2015թ.-ի խմբագրությամբ), Երևան, 2015:
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. դասագիրք բուհերի համար (պատ. խմբ. պրոֆեսոր Ն. Մ. Այվազյան), Եր., 2003, էջ 48:
3. Նազարյան Վ., Հայաստանի Հանրապետության սահմանադրական կոնցեպցիան, Երևան, 1992, էջ 7:
4. Հարությունյան Գ., Հայ սահմանադրականության զարգացման հիմնախնդիրները, Զեկուցում Ստեփանակերտում հրավիրված միջազգային խորհրդաժողովում, 17.04.2010թ./URL:http:// concourt.am/armenian/structure/president/articles/karabakh_april_2010.pdf/, Դիմելու ամսաթիվը՝ 29.11.2018 թ.:
5. Хабриева Т. Я., Чиркин В. Е., Теория современной конституции, М., 2005, с. 12-13:
6. Авакян С. А., Конституционное право России, т. 1, 2005, с. 136:
7. Арутюнян Г. Г., Баглай М. В., Конституционное право. Энциклопедический словарь. М., 2005, с. 228:
8. Мазуров А. В., Конституция и общественная практика, М., 2004, с. 22-23:
9. Конституционное (государственное) право зарубежных стран: актуальные проблемы, М., 1990,
10. Степанков И.М.,Конституция и политика, М., Наука, 1984,
11. Энтин Л.М., Разделение властей: опыт современных государств. М., Юрид. лит., 1995, 174с.
12. Кутафин 0. Е., Предмет консистуционного права, М., 2002, с. 23.
13. Guissani E. Constitutional abd Administrative Law. L., 2008. P. 4-5.

14. Greavaz H., The British constitution, London, 1995,P. 11/:
15. Homon P., Troper M. Drot Constitutionnel. 30-e ed. P., 2007. P. 24.
16. Barnett H. Constitutional abd Administrative Law. 7th ed. L., 2009. P. 5.
17. Alder J. Constitutional abd Administrative Law. 6th ed. N.Y., 2007. P. 7.

CONSTITUTION AND CONSTITUTIONALISM

SHAHNAZARYAN NORIK
Applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law of the NAS of the RA,
Lecturer of the Institute of International
Relations and Jurisprudence of the
"Haybusak" Yerevan University
Senior officer, captain of the operational
department of the RA Armed Forces unit No
e-mail: norik.shaxnazaryan@yandex.ru

The article presents the concept and essence of the constitution and constitutionalism. The purpose of the article is to show the historical genealogy and development of the constitution and constitutionalism, the role and significance in the life of the state and society by the method of legal comparative analysis. The purpose predetermined the setting of the following tasks:

a. to reveal the concept, essence and content features of the constitution and constitutionalism,

b. to conduct a brief analysis of the components of constitutionalism,

c. to define the concept of actual and legal constitutions,

d. to present the features of the procedure for the development, adoption and amendment, as well as the subject of regulation of the Basic Law.

The author, using a systematic methodology, subjected the historical and legal concept and meaning of two closely interconnected terms to research analysis.

We came to the conclusion that the Constitution is not only the fundamental law of the state, but also a kind of pact between the rulers and the ruled on the recognition of the rights and obligations of each other, and also fixes the foundations of the constitutional order of society and the state, the legal status of citizens, that is, the basis of society, on which everything else is established. The constitution establishes the structure of the state, the form of government, the political regime, the foundations of the legal status of individuals, the foundations of foreign and domestic policy. Constitutionalism is the perception of the norms and values enshrined in the Constitution

of a given state by society, the application of these values in life, the manifestation of the corresponding will of state authorities in the application and provision of enshrined norms and values.

Keywords: *Constitution, constitutionalism, constitutional value, legal regulation, legal act, legal force, actual and legal Constitutions, components of constitutionalism, constitutional ideas, constitutional regulation.*

КОНСТИТУЦИЯ И КОНСТИТУЦИОНАЛИЗМ

ШАХНАЗАРЯН НОРИК
Соискатель Института философии, социологии и права НАН РА
Преподаватель Института международных
отношений и юриспруденции
Ереванского Университета «Айбусак»
Старший офицер оперативного
отдела воинской части № ВС РА, капитан
электронная почта: norik.shaxnazaryan@yandex.ru

В статье представлено понятие и сущность конституции и конституционализма. Цель статьи-показать методом сравнительно-правового анализа историческую генеалогию и развитие конституции и конституционализма, ею роль и значение в жизни государства и общества. Цель предопределила постановку следующих задач:

1) раскрыть понятие, сущность и содержательные особенности конституции и конституционализма,

2) провести краткий анализ компонентов конституционализма,

3) определить понятие фактической и юридической конституций,

4) представить особенности порядка разработки, принятия и изменения, а также предмета регулирования Основного закона.

Автор систематизированной методологией подверг исследовательскому анализу историческое и правовое понятие и значение двух тесно взаимосвязанных между собой терминов.

Мы пришли к выводу, что Конституция является не только основным законом государства, но и своеобразным пактом между правителями и управляемыми о признании прав и обязанностей друг друга, а также закрепляет основы конституционного строя общества и государства, правового положения граждан, то есть основу общества, на котором учреждается все остальное. Конституцией закрепляются структура государства, форма правления, политический режим, основы правового статуса личности, основы внешней и внутренней политики. А консти-

туционализм-это восприятие обществом норм и ценностей, закрепленных Конституцией данного государства, применение этих ценностей в жизни, проявление соответствующей воли органов государственной власти в деле применения и обеспечения закрепленных норм и ценностей.

Ключевые слова: *Конституция, конституционализм, конституционная ценность, правовое регулирование, правовой акт, юридическая сила, фактические и юридические Конституции, компоненты конституционализма, конституционные идеи, конституционное регулирования.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.04.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 06.05.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: